Ուրվագիր իններորդ

Աստծու դատաստանը Եգիպտոսի և Բաբելոնի հանդեպ

Գրվածքների ընթերցում. Երմ 46:2-28, 50:1, 8-16, 51:6-9, 24-25, 28-37, 44-45, 58-64

I. Երեմիա մարգարեի գիրքը պատկերում է այն, թե ինչպես է Աստված գալիս՝ պատժելու ու դատելու ազգերին, որոնք աշխարհի տարբեր տեսանկյունների նախատիպն են՝ 46:2, 47:1, 48:1, 49:1, 7, 23, 28, 34, 50:1.

Ա. Ցեղերի մասին խոսելիս Երեմիան առաջին հերթին հիշատակում է Եգիպտոսը (46:2-28), իսկ վերջինը՝ Բաբելոնը (գգ 50–51).

1. Սա ցույց է տալիս, որ Աստծու աչքին աշխարհը նախ՝ եգիպտական է, և ապա՝ բաբելոնական:
2. Երեմիա մարգարեի գրքի նկարի համաձայն՝ վերջին ազգը, որը պետք է դատվի, Բաբելոնն է. երբ Աստված դատի Բաբելոնը, ազգերի հանդեպ Նրա դատաստանը կավարտվի:

Բ. Աստծու տնտեսության իրագործման համար եկեղեցին՝ Աստծու նորկտակարանյան ընտրյալները, պետք է առանձնանան աշխարհից՝ դրա բոլոր տեսանկյուններով հանդերձ՝ Հվի 17:14, 16, Հռմ 12:2, Ա Հվի 2:15-17:

II. Երեմիա 46:2-28-ը խոսում է Եգիպտոսի հանդեպ Աստծու դատաստանի մասին.

Ա. Եգիպտոսը աշխարհի նախատիպն է ապրուստ վաստակելու և վայելքի տեսանկյունից, որոնց օգնությամբ Սատանան՝ աշխարհի կառավարիչը, ում նախատիպը փարավոնն է՝ Եգիպտոսի կառավարիչը, զբաղեցնում և զավթում է Աստծու կողմից Իր տնտեսության համար ընտրած մարդկանց՝ Ծնդ 12:10, 41:57–42:3, Թվց 11:4-6, Եբր 11:25, Հվի 12:31.

1. Եգիպտոսի պետությունը խորհրդապատկերում է խավարի թագավորությունը, խավարի իշխանությունը՝ Կոլս 1:13, Մտթ 12:26:
2. Աշխարհը վայելքի աղբյուր չէ. այն բռնապետության վայր է, և աշխարհի ամեն տեսանկյուն բռնապետության մի ձև է՝ Գղտ 4:8:
3. Աշխարհում Սատանան իր բռնազավթիչ ձեռքի տակ է պահում Աստծու ընտրյալ մարդկանց՝ նրանց, ովքեր սահմանված են Աստծու մտահղացման կատարման համար՝ Եփս 2:2, Ղկս 13:11-12.
   ա. Գոյություն ունենալը մի բան է, բայց աստվածային մտահղացման համար գոյություն ունենալը՝ մեկ այլ բան՝ Հռմ 8:28, Եփս 1:11, 3:11, Բ Տմթ 1:9:
   բ. Սատանան բռնազավթել է մարդկանց, որպեսզի նրանք հոգան միայն իրենց գոյության համար, ոչ թե իրենց գոյության մեջ Աստծու մտահղացման համար՝ Մտթ 6:25, 31-33:
4. Մեզ կանչելու Աստծու նպատակի տեսանկյուններից մեկը մեզ օգտագործելն է՝ Սատանայի և աշխարհի բռնազավթումից և բռնապետությունից ուրիշներին դուրս բերելու համար՝ Գրծ 26:18, Եփս 3:9:

Բ. Աշխարհը չար համակարգ է, որը համակարգված կերպով դասավորվել է Սատանայի կողմից՝ Ա Հվի 2:15-17, Հկբ 4:4.

1. Աստված ստեղծեց մարդուն, որպեսզի վերջինս ապրի երկրի վրա Իր մտահղացման իրագործման համար, բայց Նրա թշնամին՝ Սատանան, որպեսզի բռնազավթի Աստծու ստեղծած մարդուն, Աստծուն հակառակ

աշխարհային համակարգ ձևավորեց այս երկրի վրա՝ մարդկանց համակարգելով մշակույթի, կրթության, արդյունաբերության, առևտրի, զվարճանքների և կրոնի օգնությամբ՝ Եփս 3:11, Ծնդ 1:26-28, 2:8-9, 4:16-24:

2. Երկրի վրայի բոլոր բաները, հատկապես մարդկությանը վերաբերողները, և օդում եղող բոլոր բաները համակարգվել են Սատանայի կողմից և նրա՝ խավարի թագավորությունը դարձվել, որը զբաղեցնում է մարդկանց և նրանց խանգարում Աստծու մտահղացումն իրագործելու, ինչպես նաև նրանց շեղում է Աստծուն վայելելուց՝ Ա Հվի 2:15-17:
3. Աշխարհը դեմ է Հայր Աստծուն, աշխարհի բաները դեմ են Աստծու կամքին, իսկ աշխարհը սիրողները Աստծու թշնամիներն են՝ խխ. 15-17, Հկբ 4:4:
4. «Ողջ աշխարհը»՝ սատանայական համակարգը, «չարի մեջ է պառկած»՝ Ա Հվի 5:19.
   ա. «Ողջ աշխարհը» ընդգրկում է աշխարհի սատանայական համակարգը և աշխարհի մարդկանց՝ ընկած մարդկային ցեղը:
   բ. «Պառկած է» արտահայտությունը նշանակում է պասիվ կերպով մնալ չարի ազդեցության ոլորտում, չարի բռնազավթման ու մեքենայության ներքո. ողջ աշխարհը և աշխարհի մարդիկ պասիվ կերպով պառկած են Սատանայի՝ չարի բռնազավթիչ ու նենգափոխիչ ձեռքի տակ:
   գ. Ա Հվի 5:19-ում որպես «չար» թարգմանված հունարեն բառը վերաբերում է մեկին, ով վնասատու է, կործանարար կերպով չար, մեկին, ով ազդում է ուրիշների վրա՝ նրանց չար և արատավոր դարձնելով: Այսպիսի չարը Սատանան է՝ բանսարկուն, որի մեջ պառկած է ողջ աշխարհը:
5. Սատանան օգտագործում է նյութական աշխարհը և աշխարհում եղող բաները, որպեսզի ի վերջո ամեն ինչ գլխավորի Հակաքրիստոսի թագավորության մեջ. այդ ժամին աշխարհի համակարգը հասած կլինի իր գագաթնակետին, այդժամ բացահայտվելու է, որ դրա ամեն մի մասը հակաքրիստոնեական է՝ Բ Թսղ 2:3-12:
6. Սատանայի չար աշխարհային համակարգը՝ խավարի թագավորությունը, խաչի վրա Քրիստոսի աշխատանքի միջոցով դատվեց՝ Հվի 12:31-32, 16:11.
   ա. Խաչի վրա մեղքի մսեղիի նմանությամբ Իր մահվան միջոցով Տերը ոչնչացրեց Սատանային, ով մարդու մսեղիում է՝ Հռմ 8:3, Եբր 2:14:
   բ. Սատանային այսկերպ դատելով՝ Տերը նաև դատեց աշխարհը, որը կախված է Սատանայի վրա՝ Հվի 16:11:
   գ. Երբ Տերը խաչը բարձրացվեց, աշխարհը դատվեց և դրա կառավարիչը՝ Սատանան, դուրս գցվեց՝ 12:31-32:

III. Երեմիա 50 և 51-րդ գլուխները խոսում են Բաբելոնի հանդեպ Աստծու դատաստանի մասին.

Ա. Բաբելոնը սկիզբ առավ Բաբելից՝ Ծնդ 10:8-10.

1. Բաբելում Սատանան մարդկային ցեղին հրահրեց Աստծու դեմ ապստամբելու, կուռքերին երկրպագելու և մարդու «ես»-ը բարձրացնելու. այսպիսով Բաբելը Աստծու դեմ մարդու ապստամբության,

մարդու կողմից կուռքերին երկրպագելու և մարդկային ինքնաբարձրացման սկիզբն էր, սկզբնաղբյուրը՝ 11:1-9:

2. Բաբելն իր շարունակությունը գտավ Բաբելոնում, որն Աստծու աչքին մարդկային կառավարության ավարտունությունն է՝ Երմ 50:1, Դնլ 2:32-34.
   ա. Նաբուգոդոնոսորը՝ Բաբելոնի թագավորը, նույնիսկ նույնացվում էր Սատանայի հետ՝ որպես Սատանայի մարմնավորումը՝ Եսյ 14:4, 11-15.
   բ. Բաբելոնն ավերեց Աստծու սուրբ քաղաքը և Նրա սուրբ տաճարը, և Աստծու սուրբ ժողովրդին ու Աստծու տաճարի անոթները գերության տարավ՝ Բ Մնց 36:17-20:

Բ. Հայտնության 17 և 18-րդ գլուխներում վերստեղծված Հռոմեական կայսրությունը Մեծ Բաբելոն է կոչվում, որը երկու տեսանկյուն ունի՝ կրոնական և նյութական.
1. Հայտնության 17-րդ գլուխը բացահայտում է կրոնական Բաբելոնը՝ Հռոմի ուրացողական կաթոլիկ եկեղեցին.
   ա. Աստծու աչքին Հռոմի կաթոլիկ եկեղեցին, որը դարերի ընթացքում հուդայականության շատ բաներ է պահպանում և հեթանոսության շատ բաներ է յուրացրել, Բաբելոնն է:
   բ. 17:1-ի «պոռնիկ»-ը Հռոմի ուրացողական կաթոլիկ եկեղեցին է:
   գ. Քանի որ Աստված ատում է ուրացողական եկեղեցին, մեծ նեղության սկզբում Նա թույլ է տալու, որ Հակաքրիստոսն ու տասը թագավորները ավերեն Հռոմի կաթոլիկ եկեղեցին՝ խխ. 16-17:
2. Հայտնության 18-րդ գլուխը բացահայտում է նյութական Բաբելոնը՝ Հռոմ քաղաքը.
   ա. Հայտնության 17 և 18-րդ գլուխներում Բաբելոնի երկու տեսանկյունները՝ կրոնական տեսանկյունն ու նյութական տեսանկյունը, իրար են խառնված.
      1) 17:16-ի «պոռնիկը» մատնանշում է կրոնական Բաբելոնը՝ խորհրդանշելով Հռոմի կաթոլիկ եկեղեցին, մինչդեռ 18-րդ խոսքի կինը խորհրդապատկերում է նյութական Բաբելոնը՝ խորհրդանշելով Հռոմ քաղաքը:
      2) Քանի որ Մեծ Բաբելոնը երկակի տեսանկյուն ունի, նրանից դուրս գալ նշանակում է դուրս գալ թե՛ կրոնական Բաբելոնից, թե՛ նյութական Բաբելոնից՝ 18:4:
   բ. Նյութական Բաբելոնը՝ Հռոմ քաղաքը, Աստծու աչքին ատելի է դառնալու, որովհետև այն եղել և մնում է թե՛ դիվային քաղաքականության, թե՛ դիվային կրոնի աղբյուր՝ խխ. 6-8, 20-24:
   գ. Քրիստոսը՝ որպես մեկ ուրիշ Հրեշտակ, լուսավորելու է երկիրը, որպեսզի ոչնչացնի Մեծ Բաբելոնը՝ Հռոմ քաղաքը՝ նրա մեծ իշխանությամբ հանդերձ՝ խխ. 1-2:

Գ. Բաբելոնի սկզբունքը մարդու բաներն Աստծու Խոսքի հետ խառնելն է և մսեղիի բաները Հոգու բաների հետ խառնելը՝ 17:1-5.
1. Բաբելոնը Աստծու բաների և կուռքերի բաների խառնուրդ է.
   ա. Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագավորն այրեց Աստծու տունը Երուսաղեմում, տարավ Աստծու տան՝ Աստծու երկրպագության

համար նախատեսված բոլոր անոթները և դրանք դրեց իր կուռքերի տաճարում Բաբելոնում՝ Բ Մնց 36:6-7, Եզր 1:11:

բ. Նոր Կտակարանում այս խառնուրդն ընդլայնում է Մեծ Բաբելոնը՝ Հյտ 17:3-5:

2. Մենք պետք է դուրս գանք ցանկացած իրավիճակից, որտեղ մարդու զորությունը խառնված է Աստծու զորության հետ, որտեղ մարդու ընդունակությունը խառնված է Աստծու աշխատանքի հետ, և որտեղ մարդու կարծիքը խառնված է Աստծու խոսքի հետ՝ 18:4, ծթգ 1:

Դ. Մեծ Բաբելոնը երկու անկում է ունենալու՝ կրոնական Բաբելոնի անկումը և նյութական Բաբելոնի անկումը՝ 14:8, 18:2.

1. Կրոնական Բաբելոնի անկումը տեղի է ունենալու մեծ նեղության սկզբում՝ 17:16-17:
2. Նյութական Բաբելոնի անկումը տեղի է ունենալու մեծ նեղության վերջում՝ 18:2, 21:
3. 19:1-4-ում գովքը կապված է գլխավորապես ոչ թե նյութական Բաբելոնի անկման հետ, այլ կրոնական Բաբելոնի, որովհետև Աստծու աչքին կրոնական Բաբելոնն ավելի ատելի է, քան նյութական Բաբելոնը:

Ե. Աստված դատելու է Բաբելոնն այն աստիճան, որ տիեզերքում Բաբելոնից ոչինչ չի մնալու.

1. Թե՛ Եսայան, թե՛ Երեմիան մարգարեացել են, որ երբ Բաբելոնն ավերվի, այն այլևս չի վերստեղծվելու՝ Եսյ 14:22-23, Երմ 50:39, 51:62:
2. Երբ Աստված դարաշրջանի վերջում ավերի թե՛ կրոնական, թե քաղաքական Բաբելոնը, դա լինելու է Բաբելոնի հանդեպ դատաստանի վերջը, ինչի մասին մարգարեություն կա 50 և 51-րդ գլուխներում:
3. Մեծ Բաբելոնը ավերվելու է, հեռացվելու է երկրի երեսից և կրակի լիճն է նետվելու, և բերվելու է Նոր Երուսաղեմը՝ որպես Աստծու հավիտենական թագավորության նշանավոր կենտրոնը նոր երկնքում և նոր երկրում՝ Հյտ 11:15, 21:2, 10-11:

© 2020 Living Stream Ministry